# ԵՊՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N «ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84»

ք. Երևան «07» նոյեմբերի 2017թ.

<<ԵՊՀ>> Հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Սիմոնյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Ինո-Թեքնոջի>>ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ս. Աղագումյանի, որը գործում է կազմակերպությունների կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 47554500 /քառասունյոթ միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<ԵՊՀ>> Հիմնադրամ | «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | ք. Երևան, Արովյան 29, տարածք 3 |
| ՀՎՀՀ՝ 01506928 | ՀՎՀՀ՝ 01570457 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ՝ 247010000906 | Հ/Հ՝ 1510009268820100 |
| ռեկտոր՝ Ա. Սիմոնյան | տնօրեն՝ Ս. Աղազումյան |
| ------------------------------- | ------------------------------- |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
«07» նոյեմբերի 2017թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | Մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը** |
| 1 | 48821200 | Սերվերային համակարգիչ HPE DL180 Gen9 | HPE Չեխիա | HPE DL180 Gen9 8LFF CTO Server, 2x HPE DL180 Gen9 E5-2620v4 FIO Kit, 2x HPE 16GB 2Rx4 PC4-2400T-R Kit, 2x HPE 480GB SATA 6G MU LFF SCC DS SSD, 2x HPE 4TB SATA 6G 7.2K LFF SC DS HDD, HPE DL180 Gen9 | հատ | 4947000 | 4947000 | 1 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 1 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 3PCIEX8 Riser Kit, HPE DL180 Gen9 8LFF Smart Array Cbl Kit, HP Smart Array P440/2G Controller, HPE Ethernet 1Gb 2P 361T Adptr, HPE 2U SFF Easy Install Rail Kit, HPE Gen9 Dedicated iLO Mgmt Prt Kit, 2x HPE 900W AC 240VDC Pwr Input Mdl FIO Kit, HPE 2U CMA for Easy Install Rail Kit, HPE iLO Adv incl 3yr TSU 1-Svr Lic, HPE 3Y Foundation Care 24x7 Service | | | | | | | |
| 3 | 32422100 | Կոշտ սկավառակ /Սերվերների համար/653957-001 HP G8 G9 600-GB 6G 10K 2.5 SAS SC | HP Չինաստան | HP 600GB 2.5-inch SFF Serial Attached SCSI (SAS), 6G 10K Enterprise Hot-Plug Hard Drive in G8 G9, SmartDrive Carrier | հատ | 217500 | 1305000 | 6 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 6 | IV եռամսյակ |
| 4 | 32411160 | Ցանցային երթուղիչ RB450G | Mikrotik Եվրոպական միություն | CPU 680 MHz, DDR 256Mb, MIPS-BE, պորտերի քանակները՝ ցանցային 10/100/1000 Ethernet ports – 5, Memory Cards – 1, Power Jack – 2, PoE in – 1, Serial port RS232 – 1, Memory card type – microSD, Voltage Monitor, PCB temperature monitor, աշխատանքային ջերմաստիճանի տիրույթը -40°C .. +70°C, ներառված արտոնագրի մակարդակը՝ level 5: Երաշխիք – 1 տարի | հատ | 64800 | 129600 | 2 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 2 | IV եռամսյակ |
| 6 | 30121140 | Բազմաֆունկցիոնալ տպիչF6W13A LaserJet Pro 400 MFP M426dw | HP Չինաստան | լազերային, A4, Duplex, տպելու 38ppm, առաջին էջը 5.6վրկ, հիշողությունը 256Mb, CPU 1200Mhz, ամսեկան ծանրաբեռնվածությունը 80000 էջ, 1200x1200dpi, 250-sheet input tray, 150-sheet output tray, գունավոր էկրան touchscreen, միացումներ 1x Hi-Speed USB 2.0, 1x Gigabit Ethernet, Wireless 802.11b/g/n, 1x Host USB, Տպելու լեզուները՝ PCL 5, HP PCL 6, Postscript Level 3 emulation, direct PDF (v1.7) printing, URF, PCLM, PWG, Native Office, Օգտագործվող թղթի տիպը՝ Paper plain, envelopes, transparencies, labels: Սկաների տիպը՝ Flatbed, ADF, սկանավորման որակը՝ 1200x1200dpi, սկանավորման արագությունը A4՝ մինչև 26 ppm/47 ipm | հատ | 189000 | 2835000 | 15 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 15 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (մոնոքրոմ), մինչև 21 ppm/30 ipm (գունավոր), Scan-to-email; Scan-to-network folder; Scan-to-Cloud, Scan to USB device and scan from the front panel to a network folder ֆունկցիաների առկայություն: Պատճենահանման արագությունը 38cpm: Ներառված սկզբնական քարտրիջը՝ 3100 էջի համար: հոսանքին միացնելու մալուխը F տիպի, համակարգչին միացնելու USB A/B տիպի 1.5մ մալուխ: | | | | | | | |
| 7 | 3023917 0 | Գունավոր լազերային տպիչCF388A LaserJet Pro 400 color M452nw | HP Չինաստան | գունավոր, լազերային, A4 ֆորմատի, տպելու արագությունը՝ մոնոքրոմ/ գունավոր - 28ppm: Առաջին էջը մոնոքրոմ/ գունավոր 8.9/9.5վրկ, օպ. հիշողությունը 128MB, հիշողությունը՝ 256 MB NAND Flash, CPU 1200Mhz, ամսեկան ծանրաբեռնվածությունը 50.000 էջ, 600x600dpi, 250-sheet input tray, 150-sheet output tray: LCD էկրան: Միացումներ՝ Hi-Speed USB 2.0, gigabit Ethernet, Easy-access USB, HP ePrint, Apple AirPrint, Mopria-certified, NFC Touch-to-print, Wireless Direct Printing, Google Cloud Print 2.0, Mobile Apps: Տպելու լեզուները՝ HP PCL 6, HP PCL 5c, HP postscript level 3 emulation, PDF, URF, PCLm, Native Office, PWG Raster: Օգտագործվող թղթի տիպը՝ Paper (bond, brochure, colored, glossy, letterhead, photo, plain, preprinted, prepunched, recycled, rough), postcards, labels, envelopes. Ներառված սկզբնական 4 հատ քարտրիջները՝ յուրաքանչյուրը առնվազն 1200 էջի համար, համակարգչին միացնելու USB A/B տիպի 1.5մ մալուխ, հոսանքին միացնելու մալուխ F տիպի: | հատ | 147900 | 443700 | 3 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 3 | IV եռամսյակ |
| 8 | 3023911 0 | Մոնոքրոմ լազերային տպիչC5J91A HP LaserJet Pro M402dne Printer | HP Չինաստան | մոնոքրոմ, լազերային, A4 ֆորմատի, ADF, տպելու արագությունը՝ 38ppm: Առաջին էջը 5.7վրկ: Օպ. հիշողությունը 258MB, հիշողությունը՝ 256 MB NAND Flash, CPU 1200Mhz, ամսեկան ծանրաբեռնվածությունը 80.000 էջ, տպելու որակը 1200x1200dpi, 250-sheet input tray, | հատ | 141900 | 156090 0 | 11 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 11 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 150-sheet output tray: LCD էկրան: Միացումներ՝ Hi-Speed USB 2.0, gigabit Ethernet, host USB, HP ePrint, Apple AirPrint, Mopria-certified, Google Cloud Print 2.0, Mobile Apps: Տպելու լեզուները՝ HP PCL 5, HP PCL 6, HP Postscript Level 3 emulation, direct PDF (v1.7) printing, URF, PCLM, PWG: Օգտագործվող թղթի տիպը՝ Paper (plain, light, heavy, bond, coloured, letterhead, preprinted, prepunched, recycled, rough), envelopes, labels, transparencies. Ներառված սկզբնական 1 հատ քարտրիջ՝ 3100 էջի համար, համակարգչին միացնելու USB A/B տիպի 1.5մ մալուխ, հոսանքին միացնելու մալուխը F տիպի: | | | | | | | |
| 9 | 3023921<br>0 | Բազմաֆունկ ցիոնալ տպիչ A3CF236A LaserJet Enterprise 700 M712dn | HP Չինաստան | մոնոքրոմ, լազերային, A3 ֆորմատի, ADF, տպելու արագությունը՝ 41ppm: Առաջին էջը 10.5վրկ: Օպ. հիշողությունը 512MB, հիշողությունը՝ 8GB SSD, CPU 800Mhz, ամսեկան ծանրաբեռնվածությունը 100.000 էջ, 1200x1200dpi, 2 հատ 250-sheet input tray, 250-sheet output tray: գունավոր LCD էկրան: Միացումներ՝ 2x Hi-Speed USB 2.0, 1x Hi-Speed USB 2.0 Device, 1x Gigabit Ethernet 10/100/1000 Base-T, 1x Hi-Speed USB 2.0 Easy Access Walkup Port, 1x Hardware Integration Pocket (HIP), շարժական տպելու հնարավորությունները՝ HP ePrint, Apple AirPrint, Mopria-certified: Տպելու լեզուները՝ HP PCL 6, HP PCL 5, HP postscript 3 emulation, native PDF printing (v 1.4): Օգտագործվող թղթի տիպը՝ Paper (colour, letterhead, light, plain, preprinted, prepunched, recycled, rough, tough paper), bond, cardstock, envelope, labels, transparency, vellum. Ներառված սկզբնական 1 հատ քարտրիջ՝ 10000 էջի համար, համակարգչին միացնելու USB A/B տիպի 1.5մ մալուխ, հոսանքին միացնելու մալուխը F տիպի: | հատ | 105600<br>0 | 2112000 | 2 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 2 | IV եռամսյակ |
| 10 | 3115112<br>0 | Անխափան սնուցման | AEG Չինաստան | 800VA, 480W, line interactive, AVR, USB հաղորդակցման ինտերֆեյս, հեռախոսի, ֆաքսի և մոդեմի (RJ11) գծի | հատ | 52800 | 528000 | 10 | Ք. Երևան, Ալեք | 10 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | սարք Protect Aplpha. 800 | | պաշտպանություն, ՝ 4 հատ IEC320 տիպի մարտկոցից սնուցմամբ և բարձր լարման պաշտպանությամբ: Ներառված 1 հատ CEE 7/7 - IEC 320 C13 տիպի մալուխ, 2 հատ IEC-320-C13-- > IEC-320-C14 մալուխ, 1 հատ USB A/B տիպի մալուխ: | | | | | Մանուկյան 1 | | |
| 11 | 3023223 1 | Արտաքին կոշտ սկավառակ SP020TBPHDA6 0S3K | Silicon Power Չինաստան | 2Tb, 2.5", USB 3.1 Gen1/USB 3.0, համատեղելի USB 2.0, գույնը՝ սև, սնուցումը USB պորտի միջոցով 5Վ, ջրակայուն, հարվածադիմացկուն (MIL-STD-810G 516.6 Procedure IV ստանդարտին համապատասխանություն), ներառված համակարգչին միացնելու մալուխը USB 3.0 տիպի: | հատ | 61500 | 922500 | 15 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 15 | IV եռամսյակ |
| 12 | 3021119 0 | Շարժական համակարգի չ2RS25EA HP Probook 450 G5 | HP Չինաստան | i3-7100U / 15.6 HD AG SVA HD / 4GB DDR4 / 500GB 7200rpm / DOS2.0 / DVD+-RW / Intel AC 2x2 nvP +BT 4.2 | հատ | 297600 | 3571200 | 12 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 12 | IV եռամսյակ |
| 13 | 3021119 0 | Շարժական համակարգի չ2RS20EA HP Probook 450 G5 | HP Չինաստան | i5-8250U / 15.6 HD AG SVA HD / 8GB DDR4 / 500GB 7200rpm / DOS2.0 / DVD+-RW / Intel 8265 AC 2x2 nvP +BT 4.2 | հատ | 347700 | 312930 0 | 9 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 9 | IV եռամսյակ |
| 14 | 3021119 0 | Շարժական համակարգի չX4B29AV HP EliteBook 850 G4 | HP Չինաստան | i7-7500U / 15.6 FHD AG LED SVA f/CAM slim / 8GB 1D DDR4 / 500GB / FingerPrint reader/ DOS2.0 / DVD+-RW / Intel 8265 ac 2x2 nvP +BT 4.2 WW 2Ant | հատ | 545700 | 272850 0 | 5 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 5 | IV եռամսյակ |
| 15 | 3021119 0 | Շարժական համակարգի չ1EP07EA HP Elitebook x360 1030 G2 | Չինաստան HP | i7-7500U/ 8GB / 13.3 FHD BV UWVA Touch / 256GB PCIe NVMe TLC / W10p64 / 3yw / Clickpad Backlit / Intel 8265 AC 2x2 nvP +BT 4.2 / WWAN 4G / | հատ | 947700 | 189540 0 | 2 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 2 | IV եռամսյակ |
| 16 | 3234111 0 | Համակարգչային բարձրախոսB-18 | Չինաստան Microlab | ստերեո, հզորությունը 3W (2x1.5W), սնուցումը USB-ի միջոցով, power button, volume controls, Headphone jack, գույնը սև | հատ | 6000 | 180000 | 30 | Ք. Երևան, Ալեք Մանուկյ | 30 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ան 1 | | |
| 20 | 30211190 | Շարժական համակարգիչV510-15IKB | Չինաստան Lenovo | 15.6" HD AntiGlare, Intel Core i5-7200U, 1 x 4GB DDR4-2133, 500GB/5400rpm, Intel HD Graphics, DVD+-RW DL, 1X1 AC + BT4.0, FPR, 720p HD Camera 4 in 1 card reader (SD / SDHC / SDXC / MMC slot), Windows 10 Pro, 4 cell, 41Whr, Li/Pol | հատ | 369900 | 1479600 | 4 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 4 | IV եռամսյակ |
| 21 | 30211210 | Պլանշետ /Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ գիտական ծրագիր/ ZA0K0025UA YOGA TABLET 3-X5 | Չինաստան Lenovo | LTE, 1.3Ghz, DDR 2GB, 16GB, 10.1 LCD IPS, 1280x800, 149 PP | հատ | 127800 | 127800 | 1 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 1 | IV եռամսյակ |
| 22 | 30211220 | Սեղանի համակարգիչ PC i5 | | | հատ | 247800 | 3717000 | 15 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 15 | IV եռամսյակ |
| | | i5-7400 | ՄալազիաIntel | 3.0Ghz, LGA1151 | | | | | | | |
| | | PRIME B250M-P | ՉինաստանAsus | LGA1151, Fan Xpert, UEFI BIOS, Fortified PCIe Slot prevents damage, Protection against LAN surges, Overvoltage Protection, 3X | | | | | | | |
| | | GY2400D464L17S | ԼեհաստանGoodram | corrosion-resistance for greater durability, 6 Phase digital power design, CrashFree BIOS ֆունկցիաներ: B250, 2 x PCIe 3.0/2.0 x16 | | | | | | | |
| | | DT01ACA050 | ԹայվանToshiba | PCIe 3.0/2.0 x1, 2x M.2 Socket3, 6x SATA 6Gb/s | | | | | | | |
| | | Deepcool | ՉինաստանD-SHIELD | DDR4 4GB, 2400MHz, radiator | | | | | | | |
| | | Deepcool | ՉինաստանDE-530 | 500GB, SATA3 | | | | | | | |
| | | | ՉինաստանLG | ATX, Black, 2 x5.25", 3 x 3.5", 2 x 2,5": | | | | | | | |
| | | | | 530W maximum, ATX 12V V2.31, MTBF 100000 ժամ, OVP, UVP, OPP, SCP, 120mm quiet fan PWM ֆունկցիայով, Երկար մալ | | | | | | | |
| | | | | 1x 20+4 Pin, 1x 4+4pin CPU +12V, 3x 4pin Molex, 1x 6-2pin PCI-E Power, 4x SATA Power | | | | | | | |
| | | | | SATA, dual layer, DVD+-RW, 24x/16x | | | | | | | |
| 23 | 30211220 | Սեղանի համակարգիչ PC i7 | ՄալազիաIntel | 3.6Ghz, LGA1151 | հատ | 390000 | 3900000 | 10 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 10 | IV եռամսյակ |
| | | i7-7700 | ՉինաստանAsus | LGA1151, Fan Xpert, UEFI BIOS, Fortified PCIe Slot prevents damage, Protection against LAN surges, Overvoltage Protection, 3X | | | | | | | |
| | | PRIME Z270-K | ԼեհաստանGoodram | corrosion-resistance for greater durability, 6 Phase digital power design, CrashFree BIOS ֆունկցիաներ: B250, 2 x PCIe 3.0/2.0 x16 | | | | | | | |
| | | IR2400D464L15S | ԹայվանToshiba | PCIe 3.0/2.0 x1, 2x M.2 Socket3, 6x SATA 6Gb/s | | | | | | | |
| | | DT01ACA100 | ՉինաստանDE-530 | DDR4 8GB, 2400MHz, radiator | | | | | | | |
| | | GoldenField | ՉինաստանDE-530 | 1TB, SATA3 | | | | | | | |
| | | | ՉինաստանLG | ATX, Black, LED display, 2x USB 2.0, 1x mic, 1x audio, black | | | | | | | |
| | | | | 530W maximum, ATX 12V V2.31, MTBF 100000 ժամ, OVP, UVP, OPP, SCP, 120mm quiet fan PWM ֆունկցիայով, Երկար մալ | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Deepcool | | 1x 20+4 Pin, 1x 4+4pin CPU +12V, 3x 4pin Molex, 1x 6+2pin PCI-E Power, 4x SATA Power | | | | | | | |
| | | GH24NSD1 | | SATA, dual layer, DVD+-RW, 24x/16x | | | | | | | |
| 25 | 3023749<br>0 | Համակարգչային մոնիտոր 20.6" | | 20.7", LED, anti-glare ծածկույթ, 1920x1080, 200 cd/m², 5ms on/off, 1x HDMI, 1x VGA, 1x audio-in, ներկառուցված բարձրախոսներ 2x1W, Language selection, User programmable, On-screen controls, User controls. գույնը սև: Ներառված հոսանքին միացնելու մալուխը F տիպի, 1 հատ VGA մալուխ 1.5մ: | հատ | 69600 | 348000<br>0 | 50 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 50 | IV եռամսյակ |
| 2<br>6 | 3021122<br>0 | Սեղանի համակարգիչ i7-7700K<br>i7-7700k<br>TUF Z270 MARK<br>IR2400D464L15S/<br>SSDPR-CX300-12<br>DT01ACA100<br>CoolerMaster<br>LEPA<br>GH24NSD1 | ՄայազիաIntel<br>ՉինաստանAsus<br>ԼեհաստանGoodram<br>ԼեհաստանGoodram<br>ԹայվանToshiba<br>ՉինաստանRCK350KWN2<br>ՉինաստանN500-SB-EU<br>ՉինաստանLG | 3.2Ghz, LGA1151<br>LGA1151, Z270, 3 x PCIe 3.0/2.0 x16, 3 x PCIe 3.0/2.0 x1, 2x M.2 Socket3, 6x SATA 6Gb/s, 4x DDR4 slots, Ethernet 10/100/1000, 8 HD Audio CODEC:<br>4x DDR4 8GB, 2400MHz, radiator<br>120GB SATA3, TLC NAND flash, TRIM support, 550MBs/540MBs<br>1TB, SATA3<br>ATX, Black, 2x USB 2.0, 1x mic, 1x audio, black, 120mm cooler<br>500W maximum, ATX 12V V2.31, MTBF 100000 ժամ, OVP, UVP, OPP, SCP, 120mm quiet fan PWM ֆունկցիայով, Երկար մալ<br>1x 20+4 Pin, 1x 4+4pin CPU +12V, 3x 4pin Molex, 1x 6+2pin PCI-E Power, 4x SATA Power<br>SATA, dual layer, DVD+-RW, 24x/16x | հատ | 651000 | 195300 | 3 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 3 | IV եռամսյակ |
| 2<br>9 | 3021124<br>0 | Շարժական համակարգիչ ներքուր IdeaPad MIIX 320-10ICR | Չինաստան Lenovo | 10.1" Full HD LED, IPS, touchscreen, CPU1.4Ghz DDR 2GB, 32GB, b/g/n/ac + BT4.0, 2x վեբ տեսախցիկ 2Mp և 5Mp: 1x USB Type-C 3.0, 2x USB 2.0, Micro HDMI, Micro SD, Audio combo jack, Win 10 Home | հատ | 156900 | 784500 | 5 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 5 | IV եռամսյակ |
| 3<br>0 | 3865120<br>0 | Պրոյեկտոր դասախոսությունների համար MW533 | Չինաստան Benq | Պրոյեկտոր WXGA (1280x800) native, DLP, 3.300 ANSI, Contrast 13000:1, մուտքեր-ելքեր՝ Computer In (D-sub 15pin) x 2 (Share with component), Monitor Out (D-sub 15pin) x 1, Composite Video In (RCA) x 1, S-Video In (Mini DIN 4pin) x 1, Audio In (Mini Jack) x 1, Audio Out (Mini Jack) x 1, HDMI x1, RS232 (DB-9pin) x 1, USB (Type mini B) x 1: Zoom Ratio 1.1x, բարձրախոսներ 2W, Lamp life - 4,500 ժամ -10,000 ժամ, 3D support՝ Frame Sequential: Up to 720p: Ներառված Remote Control w/ Battery; Quick Start Guide; VGA (D-sub 15pin) Cable, | հատ | 277500 | 416250<br>0 | 15 | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 15 | IV եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| [illegible] 5 | 3144100 0 | Լիցքավորվող մարտկոց AA49941 | Հնդկաստան Verbatim | AA Rechargeable Batteries | հատ | 1800 | 54000 | 30 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 30 | |
| 3 8 | 3023248 0 | Հիշողության կրիչներ 64gb UCL3-0640K0R11 | Լեհաստան Goodram | 64Gb, USB 3.1 (համատեղելի USB 3.0, 2.0 և 1.1 ստանդարտների հետ), սողացող USB միակցիչով (առանց կապարիչի), կարդալու արագությունը՝ 60 MB/s, գրելու արագությունը՝ 20 MB/s, գույնը՝ սև: | հատ | 12300 | 246000 | 20 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 20 | IV եռամսյակ |
| 3 9 | 3023465 0 | Հիշողության կրիչներ 32gb UCL3-0320K0R11 | Լեհաստան Goodram | 32Gb, USB 3.1 (համատեղելի USB 3.0, 2.0 և 1.1 ստանդարտների հետ), սողացող USB միակցիչով (առանց կապարիչի), կարդալու արագությունը՝ 60 MB/s, գրելու արագությունը՝ 20 MB/s, գույնը՝ սև: | հատ | 6300 | 630000 | 100 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 100 | IV եռամսյակ |
| 4 0 | 3023464 0 | Հիշողության կրիչներ 16gb UCL3-0160K0R11 | Լեհաստան Goodram | 16Gb, USB 3.1 (համատեղելի USB 3.0, 2.0 և 1.1 ստանդարտների հետ), սողացող USB միակցիչով (առանց կապարիչի), կարդալու արագությունը՝ 60 MB/s, գրելու արագությունը՝ 20 MB/s, գույնը՝ սև: | հատ | 3780 | 378000 | 100 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 100 | IV եռամսյակ |
| 41 | 3023463 0 | Հիշողության կրիչներ 8gb UCL3-0080K0R11 | Լեհաստան Goodram | 8Gb, USB 3.1 (համատեղելի USB 3.0, 2.0 և 1.1 ստանդարտների հետ), սողացող USB միակցիչով (առանց կապարիչի), կարդալու արագությունը՝ 60 MB/s, գրելու արագությունը՝ 20 MB/s, գույնը՝ սև: | հատ | 3540 | 354000 | 100 | Ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | 100 | IV եռամսյակ |

* *մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| <<ԵՊՀ>> Հիմնադրամ | «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | ք. Երևան, Արովյան 29, տարածք 3 |
| ՀՎՀՀ՝ 01506928 | ՀՎՀՀ՝ 01570457 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ՝ 247010000906 | Հ/Հ՝ 1510009268820100 |
| ռեկտոր՝ Ա. Սիմոնյան | տնօրեն՝ Ս. Արազումյան |
| ------------------------------ | ------------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*«07» նոյեմբերի 2017թ. կնքված*
*«ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/84» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | |
| համարը | դասակարգման (CPV) | | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 48821200 | Սերվերային համակարգիչ | 4947000 | 4947000 |
| 3 | 32422100 | Կոշտ սկավառակ /Սերվերների համար/ | 1305000 | 1305000 |
| 4 | 32411160 | Ցանցային երթուղիչ | 129600 | 129600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 30121140 | Բազմաֆունկցիոնալ տպիչ | 2835000 | 2835000 |
| 7 | 30239170 | Գունավոր լազերային տպիչ | 443700 | 443700 |
| 8 | 30239110 | Մոնոքրոմ լազերային տպիչ | 1560900 | 1560900 |
| 9 | 30239210 | Բազմաֆունկցիոնալ տպիչ A3 | 2112000 | 2112000 |
| 10 | 31151120 | Անխափան սնուցման սարք | 528000 | 528000 |
| 11 | 30232231 | Արտաքին կոշտ սկավառակ | 922500 | 922500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 30211190 | Շարժական համակարգիչ | 3571200 | 3571200 |
| 13 | 30211190 | Շարժական համակարգիչ | 3129300 | 3129300 |
| 14 | 30211190 | Շարժական համակարգիչ | 2728500 | 2728500 |
| 15 | 30211190 | Շարժական համակարգիչ | 1895400 | 1895400 |
| 16 | 32341110 | Համակարգչային բարձրախոս | 180000 | 180000 |
| 20 | 30211190 | Շարժական համակարգիչ | 1479600 | 1479600 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 21 | 30211210 | Պլանշետ /Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ գիտական ծրագիր/ | 127800 | 127800 |
| 22 | 30211220 | Սեղանի համակարգիչ PC i5 | 3717000 | 3717000 |
| 23 | 30211220 | Սեղանի համակարգիչ PC i7 | 3900000 | 3900000 |
| 25 | 30237490 | Համակարգչային մոնիտոր 20.6" | 3480000 | 3480000 |
| 26 | 30211220 | Սեղանի համակարգիչ i7-7700K | 1953000 | 1953000 |
| 29 | 30211240 | Շարժական համակարգիչ նեթբուք | 784500 | 784500 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | [illegible] | պրոյեկտոր դասախոսությունների համար | 4162500 | 4162500 |
| 35 | 31441000 | Լիցքավորվող մարտկոց AA | 54000 | 54000 |
| 38 | 30232480 | Հիշողության կրիչներ 64gb | 246000 | 246000 |
| 39 | 30234650 | Հիշողության կրիչներ 32gb | 630000 | 630000 |
| 40 | 30234640 | Հիշողության կրիչներ 16gb | 378000 | 378000 |
| 41 | 30234630 | Հիշողության կրիչներ 8gb | 354000 | 354000 |

| | |
|---|---|
| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| <<ԵՊՀ>> Հիմնադրամ | «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ |
| ք. Երևան, Ալեք Մանուկյան 1 | ք. Երևան, Արովյան 29, տարածք 3 |
| ՀՎՀՀ՝ 01506928 | ՀՎՀՀ՝ 01570457 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Արարատբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ՝ 247010000906 | Հ/Հ՝ 1510009268820100 |
| ռեկտոր՝ Ա. Սիմոնյան | տնօրեն՝ Ս. Առաքելյան |
| ------------------------ | ------------------------ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |